# ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/39

«16» Ապրիլ 2026թ.

ք. Մեծամոր

Մեծամորի համայնքապետարանը, ի դեմս Համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Համալեվ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մնացականյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-
ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը
ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով
փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը
Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու
փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի
միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող
կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N
3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է
էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին
(լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի
«Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին,
Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող
աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային
գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-
ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական
եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի
պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և
պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով
Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման
համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում
Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և
Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում
մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում
է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը
Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից
ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը
կազմում է 50,000,000.00 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,
տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:
Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու,
իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝
դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների
փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման
ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-
ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:
Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն
ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման
հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված
մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված
փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման
արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի
վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ քանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

4.4 Պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցվելու են պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամիս ժամկետով, որից հետո՝ Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտին, չկատարված գումարի չափով Պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման

պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման
(ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի
պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով
նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի
Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների
հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման
վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն
պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել
է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված
մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն
հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները
հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ
օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ
նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան
համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց
ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն
նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական
միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը
սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով
պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված
ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա
Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված
որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝
հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ
կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում,
Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի
ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Պատվիրատուին ներկայացնում է
համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ
դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական
կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239111
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար __________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Համալեվ» ՍՊԸ
Հայաստան, մարզ Արմավիր Մրգաշատ 9փ.34տ
foxvaral@gmail.com
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2475406988720009
ՀՎՀՀ 04458653

Տնօրեն՝ __________ Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«16» մայիսի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/39 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության | | | | | | Մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Միավոր գների հանրագումար | ընդհանուր առավելագույն գինը** | Հասցեն | Ժամկետը* |
| 1 | 77311500/501 | Կանաչապատման ծառայություններ | Կանաչապատման նորմերին համապատասխան ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի (Ընդհանուր մակերեսը 30 հա) սիզամարգերի կանաչապատում և ծաղկապատում (ծաղիկների ծիլերով, սոխուկներով և սածիլներով), խոտի սերմի ցանքս, ծառատունկ կամ համարժեք այլ աշխատանքներ՝ կատարողի տեխնիկական միջոցներով՝ ստեղծելով բարեկարգ, մաքուր և անվտանգ միջավայր համայնքի բնակիչների համար: Շաբաթական առնվազն 1 անգամ տնկիների վիճակի հսկում և խնամք /առանց ոռոգման/՝ առաջիկա 1ամսվա ընթացքում: Կանաչապատման ծառայության մատուցումը նախատեսվում է ձեռք բերել Հավելված 1.1-ով ներկայացված փուլերով և պայմաններով | դրամ | 3,689,055.00 | 50,000,000.00 | ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք | Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և այդ դեպքում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հիման վրա՝ վերջինիս ուժի մեջ մտնելուց ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում) ըստ պատվիրատուի պահանջի՝ պայմանագիրն (համաձայնագրը) ուժի մեջ մտնելուց հետո 12 ամիս ընկած ժամ անակահատվածում: Ընդ որում պայմանագրի կատարման ավարտին՝ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | որևէ իրավական պարտավորության |

* Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող պայմանագրի/համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

**Նշված է պայմանագրի կատարման համար առավելագույն գինը, սակայն ծառայությունները մատուցվելու են ըստ Պատվիրատուի պահանջի և դրանց դիմաց վճարումները կատարվելու է փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի հիման վրա, կիրառելով ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևը, որտեղ՝ ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է, ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է, Ք-ն մատուցված ծառայության քանակն է, իսկ մինչև պայմանագրի կատարման ավարտը պահանջի բացակայության դեպքում՝ չկատարված գումարի չափով, պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239111
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ____________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Համալեվ» ՍՊԸ
Հայաստան, մարզ Արմավիր Մրգաշատ 9փ.34տ
foxvaral@gmail.com
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2475406988720009
ՀՎՀՀ 04458653

Տնօրեն՝ ____________ Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«16» Ապրիլ 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/39 ծածկագրով պայմանագրի

# ԳՆԱՑՈՒՑԱԿ
## (միավոր առավելագույն գների)
## Այյուսակ 1

| Անվանում և նկարագրություն | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|
| 1. Տարածքի ուսումնասիրություն մինչև 2500քմ | |
| • Հողային ծածկույթի անալիզ (հողի կառուցվածք, pH մակարդակ, սննդարար նյութեր): | 200,000.00 |
| • Տարածքում եղած բուսականության քարտեզագրում՝ եզակի կամ պահպանման ենթակա բույսերը առանձնացնելու համար: 200000 | 250,000.00 |
| • Ջրամատակարարման և ոռոգման համակարգի տեխնիկական վիճակի գնահատում: | 200,000.00 |
| | |
| 2. Ծրագրի կազմում, որ իր մեջ ներառում է<br>• Բույսերի և ծառերի ընտրություն: Ընտրել այնպիսի ծառեր, թփեր և ծաղիկներ, որոնք հարմար են տվյալ կլիմային և պահանջում են քիչ խնամք:<br>• Դիզայնի մշակում:<br>• Հուշահամալիրների առկայության դեպքում խորհրդանշականությունը պահպանող կանաչապատման պլան (Հուշահամալիրի տարածքը պետք է ներկայացնի հայկական բնաշխարհի տարրերը՝ օգտագործելով համապատասխան բուսատեսակներ):<br>• Տեղադրման համար ընտրված տարածքներում գունային համադրությունների ապահովում: | 700,000.00 |
| | |
| 3. Այգեգործական աշխատանքների ցանկ 1քմ-ի համար | |
| 3.1. Տարածքի մաքրման աշխատանքներ 1քմ-ի համար, որը պետք է ներառի՝ | |
| • Չոր տերևների և ճյուղերի հավաքում և հեռացում տարածքից սպասարկող կազմակերպության միջոցներով /կամ տարածքում համապատասխան փոս փորել և չորացած տերևները հավաքել մեջը, որը 1 տարի հետո կծառայի որպես հումուս/ | 150.00 |
| • Աղբի հեռացում, այդ թվում նախկին այգեգործական աշխատանքների հետևանքով մնացած աղբի մաքրում ըստ անհրաժեշտության՝ աղբը տեղափոխելով հարակից տարածքի համար նախատեսված աղբանոցներ՝տեղափոխումն իրականացնելով սպասարկող կազմակերպության միջոցներով: | 200.00 |
| • Խոտածածկ տարածքի մոլախոտերի մաքրում | 150.00 |
| 3.2. Հողի նախապատրաստում 1քմ-ի համար, որը պետք է ներառի՝ | |
| • Հողի փխրեցում | 250.00 |
| • Հողի պարարտեցում օրգանական և հանքային պարարտանյութերով/պարարտանյութերը տրամադրում է սպասարկող կազմակերպությունը | 500.00 |
| 3.3. Բույսերի և ծաղիկների տնկում, չորացած ծառերի հատում, ծառերի էտում, որը պետք է ներառի՝ | |
| • 1 (մեկ) հատ չորացած ծառի հատում և տեղափոխում համապատասխան վայր (մինչև 5 կմ): | 6,000.00 |
| • Պայմաններին հարմար 1 (մեկ) հատ բույսի ընտրություն/բույսերը կամ համապատասխան սերմերը պետք է տրամադրի սպասարկող կազմակերպությունը | 50.00 |
| • Ծաղկող սեզոնային 1քմ բույսի տնկում՝ըստ անհրաժեշտության/բույսերը կամ համապատասխան սերմերը պետք է տրամադրի սպասարկող կազմակերպությունը | 1,000.00 |
| • Ծառատունկի իրականացում 1 (մեկ) հատ ծառ/թուփ՝ պատվիրատուի կողմից համաձայնեցված ծառերի պարագայում | 350.00 |
| • 1 Ծառի էտում | 2,000.00 |

| | |
|---|---|
| 3.4.Ոռոգման կազմակերպում և կաթիլային համակարգերի սպասարկում 1քմ-ի համար, որը պետք է ներառի՝ | 300.00 |
| • Ոռոգման կազմակերպում ըստ անհրաժեշտության | 300.00 |
| • Ձեռքի ոռոգման համար անհրաժեշտ միջոցների ապահովում | 200.00 |
| • Ավտոմատացված ոռոգման համակարգի խնամք, մաքրում , սպասարկում: | |
| 3.5.Տարածքներում այցելուների հարմարավետության համար աղբարկղերի և նստարանների վերանորոգում կամ տեղադրում, որը պետք է ներառի՝ | 25,000.00 |
| • Առկա 1 նստարանի վերանորոգում | |
| • Նստարան 2մ-անոց հենակով կարկասը մետաղական քառանկյուն խողովակից 50x30x2 պատրաստված նստատեղը և հենակը փայտից 100x30 գույնը ըստ պատվիրատուի պահանջի | 110,000.00 |
| • Նստարան 2մ-անոց առանց հենակի կարկասը մետաղական քառանկյուն խողովակից 50x30x2 պատրաստված նստատեղը փայտից 100x30 գույնը ըստ պատվիրատուի պահանջի | 95,000.00 |
| • Նստարան 3մ-անոց առանց հենակի կարկասը մետաղական քառանկյուն խողովակից 50x30x2 պատրաստված նստատեղը փայտից 100x30 գույնը ըստ պատվիրատուի պահանջի | 130,000.00 |
| • Նստարան 3մ-անոց հենակով կարկասը մետաղական քառանկյուն խողովակից 50x30x2 պատրաստված նստատեղը և հենակը փայտից 100x30 գույնը ըստ պատվիրատուի պահանջի | 165,000.00 |
| | 15,000.00 |
| • Առկա 1 աղբարկղի վերանորոգում | |
| • Մետաղական աղբարկղ չափսերը 400մմx400մմx600մմ, Կարկասը պատրաստված մետաղական քառանկյուն խողովակից 40x10x1,5 , ունենա ցինկապատ թիթեղից պատրաստված տարա որը հեշտությամբ հանվում և դրվում է կարկասի մեջ | 65,000.00 |
| 3.6.Սիզամարգերի ձևավորում և խնամք 1քմ-ի համար, որը պետք է ներառի՝ | 300.00 |
| • Խոտածածկի սերմանման նորացումներ | 3,000.00 |
| • Հիմնանորոգման անհրաժեշտություն ունեցող հատվածների վերականգնում | 200.00 |
| • Խոտհունձի իրականացում անհրաժեշտության դեպքում: | |
| 3.7.Բուսականության խնամք և բուժում 1ծառ/թուփ, որը պետք է ներառի՝ | |
| • Սեզոնային սրսկումների և բուժումների իրականացում՝ ձեռքով կամ դրոնով՝ ըստ պահանջի/անհրաժեշտ բուժանյութերը տրամադրում է սպասարկող կազմակերպությունը: | 1,500.00 |
| • Թունաքիմիկատների և այլ պաշտպանության միջոցների օգտագործման անհրաժեշտության գնահատում և ապահովում/թունաքիմիկատների ապահովումն իրականացնում է սպասարկող կազմակերպությունը: | 1,500.00 |
| 3.8.Նոր տնկված ծառերի/բույսերի հսկողություն և հաշվետվության ներկայացում, որը պետք է ներառի՝ | |
| • Մասնագետի այց և մասնագիտական կարծիքի տրամադրում (1 այց) պատվիրատուի պատվերով | 50,000.00 |
| • Տարեկան 2(երկու) անգամ մասնագետի կողմից այց՝ հիվանդությունների կամ վնասատուների առկայությունը կանխելու համար | 100,000.00 |
| **Ընդամենը՝** | **2,122,950.00** |

## Աղյուսակ 2

| հ/հ | անվանումը | տեխնիկական բնութագիրը* | միավոր գինը |
|---|---|---|---|
| 1 | Սակուրա ճապոնական,ոռյալ բուրգունդի Prunus serruiata Royal Burgundy | 2,5մ և ավելի բարձրության, բնի տրամագիծը 5.5սմ և ավելի, շտամպը նվազագույնը՝ 2մ, սաղարթը ճյուղավորված՝ ճյուղերի երկարությունը 0.8մ և ավելի, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-45սմ,D-55սմ<br>Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխիատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: | 95,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Սակուրա ճապոնական,սերուփաթա ամանոգավա Prunus serruiata Amanogawa | 2,5մ և ավելի բարձրության, բնի տրամագիծը 5.5սմ և ավելի, շտամբը նվազագույնը՝ 2մ, խիտ՝ ձևավորված գնդաձև ոչ պակաս 120սմ լայնության սաղարթով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-45սմ,D-55սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 90,000.00 |
| 3 | Սակուրա ճապոնական սերուփաթա կիկու շիդարու Prunus serruiata Kiku Shidaru | 2.5մ և ավելի բարձրության, բնի տրամագիծը 5.5սմ և ավելի, շտամբը նվազագույնը՝ 2մ, սաղարթը թափվող ճյուղերով՝ երկարությունը 0.8մ և ավելի, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-45սմ,D-55սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 90,000.00 |
| 4 | Կատալպա սովորական պ.ձ.գնդաձևCatalpa bigninioidesf.globosa | 2,5մ և ավելի բարձրության, բնի տրամագիծը 5.5սմ և ավելի, շտամբը նվազագույնը՝ 2մ, խիտ՝ ձևավորված գնդաձև ոչ պակաս 120սմ լայնության սաղարթով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-45սմ,D-55սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 70,000.00 |
| 5 | Եղևնի փշոտ պ.ձ. երկնագույն Picea pungens f.glauca | 2.0-2,5մ բարձրության, համասարաչափ զարգացած, խիտ ձվաձև սաղարթով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-45սմ,D-55սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 130,000.00 |
| 6 | Թխկի կեղծ սոսիատերև պ.ձ. ռոյալ պեթիքոաթ Acer pseudoplatanus f.Royal Petticoat | 2,5մ և ավելի բարձրության, բնի տրամագիծը 5.5սմ և ավելի, շտամբը նվազագույնը՝ 2մ, խիտ, ձևավորված գնդանման,կամ ձվանման 120սմ լայնության ծիրանագույն սաղարթով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-45սմ,D-55սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 80,000.00 |
| 7 | Թխկի սրատերև պ.ձ Գարնետ Acer palmatum 'Garnet' | 1,6-1,8 բարձրության, բնի տրամագիծը 2,5 սմ հաստության, շտամբը 1,5-1,6մ, սաղարթի տրամագիծը 0,6-0,8, 7-9 ճյուղերով՝ երկարությունը 50-60 սմ, թաղար՝ H-45սմ,D-50սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 80,000.00 |
| 8 | Կելրեյթերիա հուրանավոր Koelreuteria paniculata | 2,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամբը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի, հողագնդով, թաղար՝H-50սմ,D-50սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 80,000.00 |
| 9 | Սոֆորա ճապոնական Sophora japonica | 2,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամբը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի, փակ արմատային մակակարգով, թաղար՝ H-40սմ,D-50սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: | 100,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | |
| 10 | Ձիակասկ սովորականAescculus hippocastanum | 2,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամպը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի, փակ արմատային կամակարգով, թաղար՝ H-40սմ, D-50սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 20,000.00 |
| 11 | Ձիակասկ պավիա,կարմիր Aescculus pavia, rubra | 2,5մ և ավելի բարձրության, բնի տրամագիծը 5.5սմ և ավելի, շտամպը նվազագույնը՝2մ, խիտ, ձևավորված ձվաձև սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի,կարմրավուն ծաղիկներով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-45սմ,D-55սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 80,000.00 |
| 12 | Հուդայածառ կանադական պ.ձ.ֆորեսթ պանսի Cercis Canadensis f. Forest Pansy | 2,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամպը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի,փակ արմատային համակարգով, թաղար՝ H-45սմ,D-45սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 100,000.00 |
| 13 | Ալբիցիա լենքորանան ALbizzia julibrissin | 2,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամպը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի,հողագնդով, թաղար՝ H-45սմ,D-50սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 95,000.00 |
| 14 | Լորենի կովկասյան Tilia caucasica | 2,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամպը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի,հողագնդով, թաղար՝ H-40սմ,D-50սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 20,000.00 |
| 15 | Գինկո երկբլթակ Ginkgo biloba | 2,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամպը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի,հողագնդով, թաղար՝ H-40սմ,D-50սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 100,000.00 |
| 16 | Ոսկե անձրև Laburnum anagyroides | 2,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամպը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի,հողագնդով, թաղար՝ H-40սմ,D-50սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 100,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| 17 | Վարդակակաչածառ Liriodendron tulipifera | 1,5մ և ավելի բարձրության, բնի 5.5սմ և ավելի հաստության, ուղաձիգ, շտամպը 2.2-2.5մ, սաղարթի 7-9 ճյուղերով, ճյուղերի երկարությունը 80սմ և ավելի, հողագնդով, թաղար՝ H-40սմ,D-40սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 80,000.00 |
| 18 | Սոճի | 1.2մ և ավելի բարձրության, 2-3 ճյուղանի, ճյուղավորված, ճյուղերի երկարությունը 25-30սմ, փակ արմատային համակարգով թաղար՝ H-30սմ,D-35սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 30,000.00 |
| 19 | Կանաչ եղևնի | 1.4մ և ավելի բարձրության, ճյուղավորված, ճյուղերի երկարությունը 25-30սմ, փակ արմատային համակարգով թաղար՝ H-30սմ,D-35սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 70,000.00 |
| 20 | Տույա բրգաձև | 1.5 մ և ավելի բարձրության, ճյուղավորված, ճյուղերի երկարությունը 25-30սմ, փակ արմատային համակարգով թաղար՝ H-30սմ,D-35սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 25,000.00 |
| 21 | Կիպարիս բլու արու | 1.5 մ և ավելի բարձրության, ճյուղավորված, ճյուղերի երկարությունը 25-30սմ, փակ արմատային համակարգով թաղար՝ H-30սմ,D-35սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 40,000.00 |
| 22 | Ակացիա գնդաձև | 1.7 մ և ավելի բարձրության, ճյուղավորված, ճյուղերի երկարությունը 25-30սմ, փակ արմատային համակարգով թաղար՝ H-30սմ,D-35սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 30,000.00 |
| 23 | Պիսարդի գնդաձև կարմիր տերև | 2.0 մ և ավելի բարձրության, ճյուղավորված, ճյուղերի երկարությունը 25-30սմ, փակ արմատային համակարգով թաղար՝ H-30սմ,D-35սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 80,000.00 |
| 24 | Հացենի | Բարձրությունը: 2.0մ և ավելի, համաչափ ճյուղավորված, ճյուղերի երկարությունը 25սմ և ավելի, բնի տրամագիծը 5.5սմ և ավելի, փակ արմատային համակարգով: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: | 3,000.00 |
| 25 | Վիստերիա չինական Wisteria sinessis | Ցողունի 100սմ և ավելի երկարության,ճյուղավորված առնվազն 15սմ երկարության 15-20 ընձյուղներով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-30սմ,D-30սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: | 10,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | |
| 26 | Լագերստերեմիա հնդկական Lagerstroemia indica | 2մ և ավելի բարձրության, 7-9 համաչափ զարգացած 30-40սմ երկարութան ճյուղերով, կարմրավուն ծաղիկներով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-40սմ,D-40սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 70,000.00 |
| 27 | Լագերստերեմիա հնդկական Lagerstroemia indica | 2մ և ավելի բարձրության, 7-9 համաչափ զարգացած 30-40սմ երկարութան ճյուղերով, մանուշակագույն ծաղիկներով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-40սմ,D-40սմ Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 80,000.00 |
| 28 | Ասպիրակ վանհուտի Spiraea Vanhouttei | 0.8-0.9մ բարձրության, 4-5 ճյուղանի, ճյուղերում 12-15 հատ 15-18սմ երկարության ընձյուղներով, առողջ մազարմատային համակարգով : Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 15,000.00 |
| 29 | Մագնոլիա Սուլանժի պ.ձ.կարմիրMagnolia Soulangeana f.rubra | 1.8մ և ավելի բարձրության, 2-3 ճյուղանի, ճյուղավորված, ճյուղերի երկարությունը 25-30սմ, փակ արմատային համակարգով թաղար՝ H-30սմ,D-35սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 60,000.00 |
| 30 | Գիհի կազակական պ.ձ.ոսկեգույն Juniperus sabina f.aurea | 4-5 ճյուղանի, յուրաքանչյուրը 0.7-0.8մ երկարության, 20 և ավելի ընձյուղներով, փակ արմատային համակարգով, թաղար՝ H-30սմ, D-35սմ: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 15,000.00 |
| 31 | Գնդաձև սամշիթ | Բարձրություն՝ 50սմ և ավելի, Գնդի տրամագիծ՝ 30սմ և ավելի, տերևներ՝ խիտ, հավասարաչափ ճյուղավորում, փակ արմատային համակարգով: Երաշխիքային ժամկետ 1 տարի փոխհատուցման պայմանով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 25,000.00 |
| 32 | Սամշիթ | Բարձրություն՝ 40 սմ և ավելի, ոչ պակաս 3 համաչափ ճուղերով, ճուղերի երկարությունը ոչ պակաս 15սմ, փակ արմատային համակարգով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին | 10,000.00 |
| 33 | Գաճաճ վարդ | **Բարձրություն**՝ 15սմ և ավելի, լայնություն՝ 10 սմ և ավելի, ծաղկի տրամագիծ՝ 3սմ և ավելի, ճյուղավորում՝ խիտ, համաչափ, առնվազն 2 զարգացած բողբոջ կամ ծաղիկ մատակարարման պահին, փակ արմատային համակարգով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: | 1,500.00 |
| 34 | Թավշյա ծաղիկ (տագետես) | Բարձրություն՝ 10 սմ և ավելի, լայնություն՝ 10սմ և ավելի, **ծաղկի տրամագիծ** 3 սմ և ավելի, Գույներ՝ սպիտակ, դեղին, նարնջագույն, կարմի, երկգույն, ըստ պատվիրատուի պահանջի: | 400.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Առնվազն 1 բացված ծաղիկ կամ բողբոջ մատակարարման պահին, փակ արմատային համակարգով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: | |
| 35 | Գեռանիա | Բարձրություն: 10 սմ և ավելի, լայնություն՝ 10 սմ և ավելի, Ծաղկաբույլի տրամագիծ՝ 5սմ և ավելի, առնվազն 1 բացված ծաղիկ կամ բողբոջ մատակարարման պահին, փակ արմատային համակարգով: Գույներ՝ կարմիր, վարդագույն, սպիտակ, մանուշակագույն, ըստ պատվիրատուի պահանջի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: | 700.00 |
| 36 | Պետունիա մեկամյա | Բարձրություն: 10սմ և ավելի, Տարածման լայնություն: 20 սմ և ավելի, ծաղկի տրամագիծ 5 սմ և ավելի, առնվազն 3 բացված ծաղիկ կամ բողբոջ մատակարարման պահին, փակ արմատային համակարգով: Գույներ՝ սպիտակ, վարդագույն, կարմիր, մանուշակագույն, կապույտ, երկգույն, ըստ պատվիրատուի պահանջի: փակ արմատային համակարգով: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: | 400.00 |
| **Ընդամենը՝** | | | **1,976,000.00** |
| **Ընդամենը՝ (Աղյուսակ 1+ Աղյուսակ 2)** | | | **4,098,950.00** |

Նշված աշխատանքները սպասարկող կազմակերպությունը իրականացնելու է պատվիրատուի գրավոր պահանջի դեպքում պայմանագրի կնքումից հետո 12 ամիս ժամանակահատվածով: Պայմանագրով վճարումները կատարվելու են ըստ կատարած աշխատանքների կատարողական ակտի, համաձայն Վճարման ժամանակացույցի:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239111
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ __________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Համալեվ» ՍՊԸ
Հայաստան, մարզ Արմավիր Մրգաշատ 9փ.34տ
foxvaral@gmail.com
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2475406988720009
ՀՎՀՀ 04458653

Տնօրեն՝ __________ Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«16» մարտի 2026թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/39 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Պատվիրատուն վճարումը կատարում է իր պահանջով՝ էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով ներկայացված ծառայությունների կատարման պահանջ-հայտերի հիման վրա փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, կիրառելով պայմանագրով սահմանված բանաձևը, **սակայն պայմանագրի կատարման ավարտի դրությամբ պահանջ-հայտերի բացակայության դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:**

Վճարման ենթակա գումարները ընեկայացվելու են աճողական կարգով:

ՀՀ դրամ

| Չ/հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20__թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդամենը առավելագույն գինը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 77311500/501 | Կանաչապատման ծառայություններ | դրամ | 1 | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարան | «Համալեվ» ՍՊԸ |
| ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 | Հայաստան, մարզ Արմավիր Մրգաշատ 9փ.34տ |
| gnumnermetsamor@mail.ru | foxvaral@gmail.com |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900332239111 | Հ/Հ 2475406988720009 |
| ՀՎՀՀ 04440608 | ՀՎՀՀ 04458653 |
| Համայնքի ղեկավար ________ Է. Հովհաննիսյան (ստորագրություն) Կ.Տ. | Տնօրեն ________ Հ. Մնացականյան (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված 3
«____» ________________ 2026թ. կնքված
ՀՀԱՄՀ-ԳՀԾՁԲ-26/39 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____________________________
_____________________________
գտնվելու վայրը _______________
հհ _____________________________
հվհհ ___________________________

Պատվիրատու
_____________________________
_____________________________
գտնվելու վայրը _______________
հհ _____________________________
հվհհ ___________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____________________________
ստորագրություն
_____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____________________________
ստորագրություն
_____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ___________ (Պատվիրատուի անունը) -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________ (Կատարողի անունը) -ի

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ___________ (պայմանագրի կնքման ամսաթիվը) -ին կնքված N ___________ (պայմանագրի համարը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«___» __________________ 2026թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/39 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ ֆինանսական գործակալի անվանումը ___________ հայտնում է, որ.

1. ____ պատվիրատուի անվանումը ___-ի և ________ կատարողի անվանումը ______-ի միջև «----» ___________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _____ կատարողի անվանումը ______-ի միջև «----» ___________ 20 թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

________________________________________

_______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«—» 20 թ.